

Ս. ՃԵՄՃԵՄՅԱՆ, Մարտիրոս հայկական տպարանը, Վեներիկ, 1986, 65 էջ

Սահակ Ճեմճեմյանը, օգտվելով իրեն մատ- շնված իտալական դիվանատեսերում պահվող փաս- տաթղթերից, կարևոր լուսարանություններ է անում հայ գրքի պատմության մույժ մնացած դրվագների վերաբերյալ: Նրա նախորդ փաստա- լից աշխատությունը, որ լույս տեսավ 1980-ին, վերաբերում էր Մխիթար Սևրաստացու գրահրա- տարակազմի գործունեությանը: Իսկ անցյալ տարի նա լույս ընծայեց հայ գրքի պատմությա- նը վերաբերող այս արժեքավոր աշխատանքը:

Հեղինակը ուսումնասիրել է Հռոմի քարոզչու- թյան ժողովի դարավոր դիվանատան՝ XVII դարի հերկորդ կեսին վերաբերող մասը և հայտնաբերել մի շարք փաստաթղթեր, որոնք լույս են սփռում հայ մշակույթի պատմության մի շատ կարևոր և նույնքան ողբերգական հատվածի վրա: Այս վավերագրերը հազվագյուտ են իրենց պարունա- կած տեղեկություններով և հաստատում կամ հեր- քում են հայ գրքի պատմությանը կողմից նախ- կենում արված ենթադրությունները:

Ս. էջմիածնի և Ս. Մարգարի անվան հայկական տպարանը գործել է 26 տարի, երբ քաղաքնե- յրում՝ հրատարակելով 40 անուն հայերեն գրքեր, այդ թվում՝ Ամստերդամում (1660—1669)՝ 21 անուն գիրք, կիլոռնոյում (1669—1670)՝ 3 և Մարսելում (1672—1686)՝ 16:

Այս տպարան-հրատարակչության վերջին՝ մարսելյան շրջանն է, որ լի է ողբերգական դրո- վագներով: Նախ տպարանի աշխատողներից մե- կը՝ Թադևոս՝ Համագասպանը, ամբաստանու- թյուններ է անում տնօրենի՝ Ոսկան Երևանցու դեմ. սկսվում է հետաքննություն, ֆրանսիական իշխանությունները դադարեցնում են Գրիգոր Նարեկացու «Մատյանի» անդրանիկ հրատարա- կությունը, ինչպես և մի ժամագրքի ու Սաղմո- սարանի տպագրությունը: 1674 թ. փետրվարի 14-ին հոգևական ծանր ապրումների մեջ վախ- ճանվում է Ոսկան Երևանցին: Այնուհետև սկսու- վում է գրաքննչական հալածանքը տպարանի ու նրա նոր տնօրենի՝ Սողոմոն Լևոնյանի նկատ- մամբ. դատական գործ է հարուցվում, ապա- րանք իշխանությունների կողմից միառժամա- նակ փակվում է ու կնքվում, Սողոմոնը ձեր- քակավում է:

Տպարանի հրատարակած գրքերի հիշատա- կարանները, առաջարանները և մի քանի այլ կարգի տեղեկություններ նախքան այս թույլ էին տալիս այդ անցքերի պատճառների վերաբեր- յալ ենթադրություններ անելու: Այժմ Ս. Ճեմ- ճեմյանը մեզ վավերագրեր է ներկայացնում, որոնք ավելի քան 300 տարվա հնություն ունեն և մեզ տանում են այն օրերին կատարված դեպքերի «կուլիսների» ետևը:

Պարզվում է, որ գլխավոր դերակատարը Լոբլ է Վատիկանում աշխատող Բարսեղ անու- նով հայ հոգևորականը: Այսպես, հայտնի է, որ Ոսկան Երևանցին Ֆրանսիայի Ռազավոր կյուրովիկոս XIV-ից իրավունք էր ստացել Մար- սելում հայերեն գրքեր տպագրելու և 1672-ի երկրորդ կեսին սկսել էր իր գրահրատարակա- կան գործը այդ քաղաքում, իսկ հաջորդ տար- վա սկզբին Վատիկանի նվիրակը Փարիզում՝ Ֆրանսուա Պիկեն, Ոսկանի մասին ամբաստա- նագիր է ուղարկում Հռոմի ժողովին՝ նրան ներկայացնելով իրրև խաբեբա, հերձվածող՝ հորդորելով, որ պապը դիմի Ֆրանսիայի Ռա- ղավորին Մարսելի հայկական տպարանը փա- կելու խնդրանքով: Պարզվում է, որ Պիկենին Ոսկան Երևանցու դեմ ամբաստանություն գրե- լուն դրդել է Բարսեղը: Երբ այս օտարազգին ազատվում է Բարսեղի հյուսած ցանցից և ծա- նոթանում փաստերին, սկսում է եռանդով նպաս- տել հայկական տպարանի գործունեությանը: Ապա. ֆրանսիացի հայագետ Լ. Մ. Պիդոն նույնպես ամբաստանագիր է հղել Հռոմ՝ Ոս- կանի գեմ և ապա Ոսկանին ամբաստանել նաև Մարսելի փոխպատկապոսի մոտ, պնդելով, որ, իբր, հայկական տպարանը հերետիկոսական գրքեր է հրատարակում, որ Ոսկանը խաբում է Ֆրանսիայի իշխանություններին և որ անհրա- ժեշտ է փակել հայերի տպարանը: Ս. Ճեմճեմ- յանը հրապարակել է նյութեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես մի քանի տարի անց նույն Պիդոն դառնում է հայկական տպարանի շեղմ պաշտպանը, իր գրություններով ամեն կերպ օգնում է հայերին ազատ շարունակելու իրենց գրահրատարակական աշխատանքը: Սա ակոն- հայտորեն հասկանալի է դարձնում, որ Պիդոնին ես մոլորության մեջ է գցած եղել դարձյալ նույն Բարսեղը, ինչպես և՛ նրա կամակատարը՝ Մարսելում իրրև թարգման-գրաքննիչ նշանակ- ված, դարձյալ հայ հոգևորական Թոմաս Հայ- րապետը: Վավերագրերն ասում են, որ այս մարդուն Մարսելի հայկական տպարանի վրա հսկիչ նշանակելու նախաձեռնողը եղել է նույն Բարսեղը և սրա ցուցումներով էլ գործել է այդ Թ. Հայրապետը: Բարսեղի թելադրանքով սա հայկական տպարանի դեմ գրում է ամբաստա- նություն ամբաստանության հետևից և հղում Վատիկան, ինչպես և վարկարեկում տպարանը ֆրանսիական իշխանությունների առաջ: Գրքի հեղինակը իր բերած փաստերն ամփոփելով գրում է. «Թոմաս Հայրապետը ամբողջ կրակ է ու եռանդ, կուղե, որ աշխարհիս բոլոր հե- քրը համոզվին իրմե և իր մյուս երկու ղեկավար»:

ներեն (ակնարկելով Բարսեղի և Հովհաննես Լուսինի), թե հայոց ամբողջ ժեսը, տոները, արարողությունները, ծովերը, լեռներ, գրությունները հերձվածողական ու հերետիկոսական են և որ ձգելով ամեն բան՝ ամենքը իրենց նման լատին դառնանա (էջ 50):

Բարսեղը Հռոմում, նրա դրածո Քոստա Հայրապետը Մարսելում, շին հանդուրժում Եվրոպա եկած որևէ հայի հայրենասիրության ամենափոքր դրսևորումը: Թ. Հայրապետը Առաքել արքեպիսկոպոսից ստացած անձնական բարեկամական նամակը, որտեղ Առաքելը պաշտպանում է հայկական տպարանը, ուղարկում է Հռոմ կից դրոթյամբ՝ դատապարտելով արքեպիսկոպոսի հայրենասիրական զգացմունքները: և ամբաստանելով նրան Վատիկանի առաջ որպես հերետիկոսի: Ապա Բարսեղն ամբաստանում է Ջաքարիա վարդապետին որպես Հռոմին անհավատարիմ անձնավորության: Ձեռք է գցում Ջմյունիայի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոսի երկու նամակները՝ գրված հայ վաճառական Սաֆրազին և իր ամբաստանագրի ուղեկցությամբ ուղարկում է Հռոմ, իսկ Սաֆրազին բանտարկել է տալիս: Նրա ջանքերով է բանտ ընկնում նաև Սողոմոն Լևոնյանը և ազատվելու համար ստիպված ենթողություն է խնդրում հայոց տպարանի մյուս թշնամուց՝ Քաղոս Համազասպյանից: Պարզվում է, որ հայերեն նոր գրահրատարակություն կազմակերպելու նպատակով Հայաստանից Եվրոպա եկած Քովմաս Վանանդեցին անգամ ամբաստանություն է ենթարկվել Բարսեղի կամակատարելուն: Թ. Հայրապետի կողմից: Մի վավերագրի իմանում ենք, որ այդ գրաքննիչն է արգելք հանդիսացել, որ Վանանդեցիները իրենց տպագրական գործը Մարսելում սկսեին: Պարզվում է նաև, որ նույն այդ Թ. Հայրապետը ծպտյալ այցելություններ է կատարել հայկական տպարան՝ բռնելու և իշխանություններին մատենելու հայերեն գրքերի գաղտնի տպագրությունը: Նրա հրահանգով մի քանի հարյուր հայերեն արդյուն հրատարակված գրքեր են այրվել և այսպես շարունակ: Մի խոսքով, երկու հայազգիներ օտարություն մեջ ամեն ինչ անում են հայոց մշակութային կարևոր կենտրոնը վերացնելու համար: Եվ ի վերջո հաջողում են:

Բացի վերոհիշյալ երկու ֆրանսիացիներից, հայ գրահրատարակիչներին պաշտպանել է նաև մի երրորդ ֆրանսիացի, նույնպես Պիկե ազգանունով, որ Սորբոնի համալսարանի պրոֆեսոր էր:

Այդպես, վավերագրերը պարզ պատմում են, որ այլազգիներն են երկու բանասրկուներից պաշտպանել հայ գրահրատարակիչներին: Փայա-

տաթղթերը ցույց են տալիս, նաև, որ Վատիկանի օղողվել քանիցս անհետևանք է թողել: հայ գրահրատարակիչների դեմ Բարսեղի և Թ. Հայրապետի՝ իրեն հղած ամբաստանագրերը: Դրա հետևանքը, սակայն, եղել է այն, որ այդ երկու հայազգիներն ավելի հետևողականորեն են ամբաստանել հայկական տպարան-հրատարակչությունը:

Ի դեպ, նախքան Ս. Ճեմճեմյանի այս վավերագրական աշխատության հրատարակումը՝ տողերին հեղինակը ենթադրություն էր արել (եւայ գրքի պատմություն, հ. 1, 1977, էջ 485), որ կաթոլիկական կրթություն ստացած երեք հայազգի հրատարակիչներից՝ Բարսեղ, Քովմաս Հայրապետ, Հովհաննես Լուսին, վերջինս ավելի մեղմ և նույնիսկ բարյացակամ վերաբերմունք պետք է ունեցած լիներ հայկական տպարանի նկատմամբ: Այժմ Ս. Ճեմճեմյանը գրում է, որ այդ ենթադրությունը հիմնավոր է, քանի որ ոչ մի փաստաթուղթ չի գտնված, օրվկայի, թե Մարսելում գրաքննիչ եղած ժամանակ Հովհաննես Լուսինը վնասած լինի հայ գրահրատարակիչներին: Արդյո՞ք նաև դա չի եղել պատճառը, որ նրան շուտով անում են այց պաշտոնից և Բարսեղի հորդորներով նրա փոխարեն նշանակում Թ. Հայրապետին, սա էլ հանձնի կողմից իր միջամտություններով ազավաղում է հրատարակվող գրքերի քննարկումը: մյուս կողմից ջանում է վերջնականապես փակել տալ տպարանը, կազմալուծել հայ գրահրատարակիչների ամբողջ աշխատանքը:

Հովհաննես Լուսինը XVII դարի ամենաբեղմնավոր հայ մշակութային գործիչն է, լեզվաբանական, ճարտասանական արժեքավոր գրքերի հեղինակ, թարգմանիչ, աշխարհաբար երկրորդ գրքի (Պարզաբանություն հոգեբույժ սաղոսոսացնա, Վենետիկ, 1687) հեղինակ, աշխարհաբարի դատի առաջին պաշտպանը (նույն գրքի առաջաբանում) հայոց մեջ. այսպիսով՝ անձնավորությունը չէր կարող լինել Բարսեղ կամ Թ. Հայրապետ, և վավերագրերն ասում են, որ, իրոք, չի եղել այդպիսին:

Ս. Ճեմճեմյանի ներկայացրած վավերագրերի շնորհիվ մեր առաջ ավելի պարզորոշ է կանգնում նաև մի ուրիշ կերպար՝ Քաղոս քահանա Համազասպյանը: Սա արդեն Բարսեղի կամ Քովմասի նման ասկերոնքային օտարամուլի է: Նա ասկերոնքային շքահատու է: Ոսկանհետ նրա վեճը դրամական էր. նպատակն էր տպագրված գրքերից շահույթի ավելի մեծ բաժին կորզելը: Նա Մարսելում ձևանում է ուղղափառ կաթոլիկ, նախ Ոսկանին, հետո սրան փոխարինած՝ Սողոմոն Լևոնյանին ամբաստանում որպես հերետիկոսների Գեորգյալ մի սպա-



տակով՝ գրքերի վաճառքից ավելի մեծ շահույթ ստանալու իսկ Կ. Պոլսում արդեն ձևանում է Հայաստանյայց եկեղեցու հետևողական պաշտպան, հետևորդ, այս անգամ էլ ամրաստանում է Սողոմոնին իր նրա կաթոլիկ լինելու համար, և դարձյալ նպատակը նույնն է՝ շահույթը (ձգտում էր Սողոմոնի գրքերը լուսավորչականների շրջանում վարկաբեկել և հանել վաճառքից ու իրենք վաճառել)։

Հայ գրքի պատմության մի շարք ուրիշ «գաղտնիքներ» էլ է բացում այս աշխատությունը։ Օրինակ, իմանում ենք, որ Զմյուռնիայի անունը կրող 1676 թ. հրատարակված Մաշտոց-ծիսարանը իրականում հրատարակվել է Մարսիլում, այն էլ գաղտնի. Սողոմոնը գրքի վրա Զմյուռնիա է նշել իր հակառակորդների նոր հայածանքներից խուսափելու համար։ Տեղեկություններ ենք ստանում Սողոմոնի ընտանեկան հարցերի վերաբերյալ, նաև այն մասին, որ հայկական տպարանը Սողոմոնի բնակարանում է գտնվել, որ նրա զավակներն էլ տպագրությամբ են զբաղվել և այլն։

Ս. Ճեմճևմյանը ոչ միայն մեծ աշխատանք է կատարել վավերագրերը հայտնաբերելու և հրատարակելու ուղղությամբ, նա նաև հմտորեն արժեքավորել ու մեկնաբանել է դրանք։ Միայն մեկ-երկու տեղ, թերևս, վիճելի լինի նրա մեկնաբանությունը։ Օրինակ, Թ. Հայրապետի ամբաստանագրերից մեկում գրված է. որ Մարսելի հայկական տպարանի գրաշար Մատթեոս Վանանդեցին, փոխադրվելով Ամստերդամ, իրը գողացել ու իր հետ տարել է ոսկանյան տպատառերի մի մասը։ Աշխատության հեղինակը սա համարում է ճիշտ վկայություն. «Նմանապես ձևով մը կհաստատվի, թե Մատթեոս Մարսիլիային հետը փոխադրած ըլլա ոսկանյան գրեր մը, Ամստերդամի մեջ սկսելու համար տպագրությունը» (էջ 58)։ Պետք է ասենք, որ Թ. Հայրապետի այս սրածին ևս

վստահելու հիմք չկա։ Հայտնի է, որ դալով՝ Ամստերդամ, Մատթեոսը նախ և առաջ հոնգարացի հայտնի գրաձուլիչ Նիկողայոս Քիչին հայկերեն նոր տպատառեր է պատրաստել տալիս և դրանցով 1685-ին հրատարակում է իր հայտնի Շարահնոցը։ Այնուհետև, Վանանդեցիների տպագրական ամբողջ գործունեության ընթացքում երբևէ ոսկանյան տպատառեր չեն օգտագործվել և նրանց հրատարակած գրքերից որևէ մեկում այդ տառերից չկան։ Կարծում ենք, որ Թ. Հայրապետի հաղորդածը պարզապես սուտ է, և նպատակն է և՛ել Մատթեոսին վարկաբեկել, վերագրել նրան քրեական հանցանք, արգելք դնելու բողոքական Հուլանդիայում ևս նրա սկսած հայկական տպագրական գործունեությանը։

Գրելով 1678-ին Թովմաս Վանանդեցու նվերոպա գալու և 1681-ին Հոռմ հասնելու մասին՝ գրքի հեղինակն ավելացնում է. «Ուրիշ աղբյուրներն գիտենք, Բե Թովմաս եպս. Հոռմ եղած ատեն արդեն ծրագիր ունեց գործակցելու Ոսկան վրդ-ի հրատարակչական գործին. այս կետը սակայն ծածկված է մեր ունեցած աղբյուրներում մեջ» (էջ 57)։ Այդ աղբյուրներում նման տեղեկություն չէր էլ կարող լինել, քանի որ այն ժամանակ Ոսկանն արդեն 7 տարի էր, ինչ մահացած էր։ Որ Թովմաս Վանանդեցին Ոսկան Երևանցու հետ գործակցելու ծրագիր ունեցել է, ճիշտ է։ Ճիշտ է նաև, որ նա Ոսկանին հանդիպել է Եվրոպայում, սակայն իր առաջին ուղևորության ժամանակ՝ տասնմեկ տարի առաջ (1670-ին), երբ ոսկանյան տպարանը գործում էր Լիվոռնոյում։

Նշվածները պարզապես աննշան վրիպումներ են այս, իրոք, արժեքավոր աշխատության մեջ։ Գովելի է, խրախուսելի Սահակ Ճեմճևմյանի եռանդուն գործունեությունը հայ գրքի պատմությունը առաջնակարգ աշխատություններով հարստացնելու գործում։

Բաճախի. գիտ. դոկտոր Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ